# ՓԱՐՈՍ



Է-Լրատու
Մարտ 2023 - Թիւ 2
Հրատարակութեամբ Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Շրջանի Վարչութիւն

## Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Շրջանի Սկաուտական Ընդհանուր Խմբապետուհի



Միութեանս վարչութիւնը իր 2-րդ ժողովին նշանակեց Քոյր Նայիրի Ալպանեանին միութեանս սկաուտական ընդհանուր խմբապետութեան  պաշտօնը վարելու :

Յաջողութիւն ձեր նախատեսուած ծրագիրներու իրականացման աշխատանքներուն :

## Կոչ՝ գործել յանձնախումբերու մէջ

Յարգելի Քոյրեր , Եղբայրներ եւ համակիր հայրենակիցներ . Միութեանս զարգացման եւ յառաջատեւման կապակցութեամբ , միութեանս վարչութիւնը ձեզ կհրաւիրէ մօտենալու« ներքեւ յիշեալ» նշանակուած վարչական պատասխանատուներուն մօտ  միութեանս յանձնախումբերու մէջ գործելու նպատակով :

Մարզական Յանձնախումբ « Եղբ. Սարգիս Ալպանեան».
Ընկերային Յանձնախումբ « Եղբ. Շանթ Պետրոսեան ».
Քարոզչական Յանձնախումբ  եւ Facebook  « Եղբ. Րաֆֆի Փօլօեան».



Եղբ. Րաֆֆի Փօլօեան



Եղբ. Սարգիս Ալպանեան





Եղբ. Շանթ Պետրոսեան

## Ձմրան Պապը Առնհեմի մէջ



Կիրակի 11 Դեկտեմբեր 2022 Թ.ին , Առնհեմ քաղաքի ( De Pass ) մարզադաշտի մարզասրահէն ներս , Միութեանս Սկաուտական խմբապետներու կազմակերպութեամբ , տեղի ունեցաւ Ձմռան Պապի անակնկալ այցելութիւնը  մեր ներկայ գտնուող սկաուտներուն եւ իրենց ընտանիքներուն :

Ծանօթ :Յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար  , այցելել «Հ Մ Ը Մ Առնհեմ Homenetmen Arnhem » Facebook 15 դեկտեմբեր 2022 Թ.կայքէջը






## Բուն Բարիկենդան Առնհեմ-ի մէջ




Կիրակի 19 Փետրուար 2023 Թ.ին Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ-ի օգտագործած մարզադաշտի սրահին մէջ , տեղի ունեցաւ «Բուն Բարիկենդան»տօնի առթիւ ընտանեկան հաւաք:

Այդ օրը հաւաքուեցան մօտ աւելի քան 125 անձ. օրուայ ձեռնարկին տեղի ունեցաւ գեղեցիկ ծպտուած տարազներու « ըստ փոքրիկներու եւ մեծահասակներու դասակարգով» մրցանակ . այդ օրը մեր մէջ ներկայ գտնուեցան Վարդան Մամիկոնեանն , Ղեւոնդ Երէցը , Խաղաղութեան աղաւնին .... եւ ուրիշները:

Երկրաշարժէն տուժուած մեր հայրենակիցներուն օգնութեան գործով՝. Միութեանս վարչութեան որոշումով այդ օրուայ ձեռնարկին ստացուած հասոյթը տրամադրուեցաւ երկրաշարժի տուժուածներուն:

*Ծանօթ :Յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար , այցելել «Հ Մ Ը Մ Առնհեմ Homenetmen Arnhem » Facebook 22 Փետրուար 2023 Թ.կայքէջը*

## Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Շրջանի տարեկանս 4-րդ բանակում




Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Շրջանի Սկաուտական խմբապետական կազմի կազմակերպութեամբ , Առնհեմ քաղաքի մէջ ( De Pas ) բանակավայրին մէջ , Հայ Սկաուտի օրուայ նուիրուած , 25-26 Փետրուար 2023 Թ.ին տեղի ունեցաւ միութեանս տարեկանս 4-րդ բանակումը: Օրուայ բանակումին մասնակցեցան « 25 սկաուտներ»:

Բանակումին սկաուտական խմբապետական կազմը կազմուած էր , քոյր Նայիրի Ալպանեան « Բանակավայրի ընդհանուր խմբապետուհի» , քոյր Նօժեհ Ազիզեան - Իշխանեան եւ քոյր Թամար Պօղոսեան – Ստեփանեան . Խմբ.ական կազմը նախապէս պատրաստած էր բանակումի մասնակիցներուն հետաքրքիր տեսլական եւ գործնական յայտագիր .

Բանակումը աւարտուեցաւ միութեանս ընկերային յանձնախումբի կողմէ պատրաստուած Իրաքի հանրաճանաչ ճաշ « Թէշրիպ Պակլլա»ով :

*Ծանօթ :Յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար , այցելել «Հ Մ Ը Մ Առնհեմ Homenetmen Arnhem » Facebook 26Փետրուար 2023 Թ.կայքէջը*

Ձեր առաջարկներով միութիւնս զարգացնելու ենք
Առաջարկներու համար կը խնդրուի կապ հաստատել «Office.arnhem@homenetmen.org » - ով